ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Սիսիան **14/06/2024**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 06
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 12 անդամներ:

Բացակա էին՝ Ավագ Ասատրյանը, Աննա Ավետիսյանը, Մարինե Գրիգորյանը, Գևորգ Դավթյանը, Դավիթ Դավթյանը, Բելլա Թամրազովան, Հայկ Հակոբյանը, Անի Հարությունյանը, Ջիվան Մարգարյանը

Ավագանու նիստին մասնակցում էին՝

Գարիկ Հակոբյանը, Արմինե Հարությունյանը, Երվանդ Եղիազարյանը, Դավիթ Հարությունյանը, Դավիթ Այվազյանը, Նարա Հովհաննիսյանը, Վեյնամին Թանգյանը, Նարեկ Հովսեփյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արմեն Հակոբջանյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կարեն Իվանյանը

Ավագանու նիստն իրավազոր էր և հայտարարվեց նիստը բացված:

Նիստն ուղիղ հեռարձակվում էր:

Նախքան օրակարգը հաստատել համայնքի ղեկավարը ներկայացրեց, որ անհրաժեշտություն է առաջացել օրակարգ ներառել ևս 2 հարց.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 17-ի թիվ 16-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 21-ի թիվ 08-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Դրվեց քվեարկության

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի 2024 թվականի հունիսի 14-ի հերթական նիստի օրակարգը՝
   1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 99-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.
   2) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Սառնակունք բնակավայրում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելուն հավանություն տալու մասին.
   3) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Շաքի բնակավայրի վարչական սահմաններում նախատեսվող հանքարդյունահանման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին.
   4) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Սալվարդ բնակավայրի վարչական սահմաններում նախատեսվող հանքարդյունահանման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին.
   5) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Իշխանասար բնակավայրի վարչական սահմաններում նախատեսվող հանքարդյունահանման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին.
   6) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող գիշերային լուսավորության ցանցի հենասյուները համատեղ օգտագործման վարձավճարով տրամադրելու մասին.
   7) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող գիշերային լուսավորության ցանցի հենասյուները համատեղ օգտագործման վարձավճարով տրամադրելու մասին.
   8) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող գիշերային լուսավորության ցանցի հենասյուները համատեղ օգտագործման վարձավճարով տրամադրելու մասին.
   9) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի թիվ 14-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
   10) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին.
   11) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 17-ի թիվ 16-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.
   12) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 21-ի թիվ 08-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 062-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 99-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 83-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով ու «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 99-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝
   1) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «եկամուտների գծով՝ 2683256.4 հազար դրամ» բառերը փոխարինել «եկամուտների գծով՝ 2684999.5 հազար դրամ» բառերով.
   2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ծախսերի գծով՝ 3562548.9 հազար դրամ» բառերը փոխարինել «ծախսերի գծով՝ 3564292.0 հազար դրամ» բառերով.
   3) որոշման 2-րդ կետի 1-ին հատվածում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելված 1-ի.
   4) որոշման 3-րդ կետի 2-րդ հատվածում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելված 2-ի.
   5) որոշման 4-րդ կետի 3-րդ հատվածում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելված 3-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Զեկուցող Դ. Այվազյանը մանրամասը ներկայացրեց բյուջեում կատարվող փոփոխությունները: Ավելացրեց նաև, որ որոշման նախագծի ընդունումից հետո համայնքի բյուջեի եկամուտներն ու ծախսերը կավելանան 1743100 ՀՀ դրամով:
Հովսեփ Առաքելյանը հարցրեց, թե 1900000 ՀՀ դրամ գումարը, որ տրամադրում ենք, ինչքա՞ն ժամանակով ենք տալիս:
Դ. Այվազյանը պատասխանեց, որ տրամադրելու ենք մինչև տարվա վերջ իրավաբանական ծառայություններ մատուցի:
Հ. Առաքելյանը առաջարկեց, իրավաբանական բաժին ձևավորել և իրավաբաններ աշխատեն:
Ա. Հակոբջանյանը պատասխանեց, որ մասնագետներ չկան, և ունենք գլխավոր մասնագետի թափուր պաշտոն:
Ն. Յազուլյանը հարցրեց, թե քանի գործ է շահել:
Ա. Հակոբջանյանը պատասխանեց, որ քանի գործ, որ հանձնարարված է բոլորը ընթացքի մեջ են:
Երկար քննարկումից հետո հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 063-Ն/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՌՆԱԿՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԵՅՆԱՄԻՆ ԹԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001

թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշումն ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Սառնակունք բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարել փոփոխություն և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության՝ արոտավայր գործառնական նշանակության 12,9հա հողամասը փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբեկտեների նպատակային նշանակության էներգետիկայի գործառնական նշանակության:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վ. Թանգյանը զեկուցեց, որ անհրաժեշտ է հողամասի գործառնական նշանակությունը փոխել, որպեսզի էլեկտրաէներգիայի կուտակիչի և արևային էլեկտրակայանի ծրագիրը իրականացվի:

Հ. Դանիելյանի հարցին, թե որ ընկերությունն է ներկայացնում: Ա. Հակոբջանյանը պատասխանեց, որ ռուսաստաբնակ հայ է:

Ա. Աղաջանյանը հարցրեց, թե որտե՞ղ է գտնվում տարածքը և պայմանագրեր կան վարձակալական օգտագործման: Կարող է խանգարի տարածաշրջանի բնակիչներին:

Ա. Հովհաննիսյանը պատասխանեց, որ գտնվում է Ծղուկ բնակավայրի մոտ:

Ա. Հակոբջանյանը ավելացրեց, որ եթե խանգարի հարցը նորից կքննարկվի, և տվյալ անձը պատրաստ է այդ տարածքում ինչքան խոտ լինի առնի տա ժողովրդին:

Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 064-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԵՅՆԱՄԻՆ ԹԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ և 16-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշման հավելվածի 28-րդ կետը.

1. Տալ նախնական համաձայնություն «ՄՈՆՈԼԻԶԱ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Շաքի բնակավայրի վարչական սահմաններում նախատեսվող հանքարդյունահանման (ավազի և կոպիճի արդյունահանման) աշխատանքներին:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վ. Թանգյանը զեկուցեց, որ Շաքի բնակավայրում տեղի է ունեցել հանրային լսում և տրվել է դրական եզրակացություն:

Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 065-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱԼՎԱՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԵՅՆԱՄԻՆ ԹԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ և 16-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշման հավելվածի 28-րդ կետը.

1. Տալ նախնական համաձայնություն «ԳԵՈՌԵՅԴ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Սալվարդ բնակավայրի վարչական սահմաններում նախատեսվող հանքարդյունահանման (ոսկու արդյունահանման) աշխատանքներին:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 066-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՇԽԱՆԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԵՅՆԱՄԻՆ ԹԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ և 16-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշման հավելվածի 28-րդ կետը.

1. Տալ նախնական համաձայնություն «ՖԱՆՏՈՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Իշխանասար բնակավայրի վարչական սահմաններում նախատեսվող հանքարդյունահանման (բազալտի արդյունահանման) աշխատանքներին:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հ. Դանիելյան ներկայացրեց, որ այնտեղ 7հա այգի կա և դա խնդիր է:

Ա. Աղաջանյանը առաջարկեց, տվյալ բնակավայրի վարչական ղեկավարը ներկայանա և բնակիչների հարցերին պատասխանի:

Կ. Հովհաննիսյանը պատասխանեց, որ հանրային լսում է եղել և տվել են դրական եզրակացություն:

Առաջարկեցին, որ կազմակերպությունը քարտեզ ներկայացնի, եթե չի վնասում այգին, այդ ժամանակ նորից հարցը կքննարկեն:

Երկար քննարկումից հետո նիստին ներկա ավագանու 12 անդամները քվեարկեցին «դեմ» և որոշման նախագիծը չընդունվեց:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ՀԵՆԱՍՅՈՒՆԵՐԸ ՀԱՄԱՏԵՂ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԵՅՆԱՄԻՆ ԹԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 606-րդ հոդվածով, 608-րդ հոդվածի 1-ին, 616-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով ու 617-րդ հոդվածով և նկատի ունենալով «Էս Տելեկոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Կարինա Սահակյանի դիմումն ու համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող գիշերային լուսավորության ցանցի հենասյուները համատեղ օգտագործման իրավունքով, վարձավճարով 1 /մեկ/ տարի ժամկետով տրամադրել «Էս Տելեկոմ» ՍՊԸ-ին՝ ինտերնետ կապի ծառայություններ մատուցելու համար:
2. Տարեկան վարձավճարի չափ սահմանել 200000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ:
3. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վ. Թանգյանը զեկուցեց, որ 3 ընկերություն դիմել են ինտերնետ կապի ծառայության համար հենասյուները վարձակալությամբ տրամադրելու համար:

Հ. Առաքելյանը հարցրեց, ինչու է 5 տարի ժամկետով և 200000 ՀՀ դրամ:

Վ. Թանգյանը պատասխանեց, որ նախնական այդպես են պայմանավորվել, կարող են փոխել:

Հ. Դանիելյանը ավելացրեց, որ շահագործման կանոնները պահպանեն և պայմանագրում ֆիքսվի դա:

Բուռն քննարկումից հետո առաջարկեցին 5 տարին փոխարինվի 1 տարով, իսկ գումարը մնա անփոփոխ:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 067-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ՀԵՆԱՍՅՈՒՆԵՐԸ ՀԱՄԱՏԵՂ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԵՅՆԱՄԻՆ ԹԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 606-րդ հոդվածով, 608-րդ հոդվածի 1-ին, 616-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով ու 617-

րդ հոդվածով և նկատի ունենալով «Լայքնետ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Դավիթ Ամիրյանի դիմումն ու համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող գիշերային լուսավորության ցանցի հենասյուները համատեղ օգտագործման իրավունքով, վարձավճարով 1 /մեկ/ տարի ժամկետով տրամադրել «Լայքնետ» ՍՊԸ-ին՝ ինտերնետ կապի ծառայություններ մատուցելու համար:
2. Տարեկան վարձավճարի չափ սահմանել 100000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ:
3. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 068-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ՀԵՆԱՍՅՈՒՆԵՐԸ ՀԱՄԱՏԵՂ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԵՅՆԱՄԻՆ ԹԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 606-րդ հոդվածով, 608-րդ հոդվածի 1-ին, 616-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով ու 617-րդ հոդվածով և նկատի ունենալով «ՄԵԳԱՆԵՏ ԷՅՉ ԴԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Նարեկ Մալինցյանի դիմումն ու համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող գիշերային լուսավորության ցանցի հենասյուները համատեղ օգտագործման իրավունքով, վարձավճարով 1 /մեկ/ տարի ժամկետով տրամադրել «ՄԵԳԱՆԵՏ ԷՅՉ ԴԻ» ՍՊԸ-ին՝ ինտերնետ կապի ծառայություններ մատուցելու համար:
2. Տարեկան վարձավճարի չափ սահմանել 200000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ:
3. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 069-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի ԹԻՎ 14-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ԻՎԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 34-րդ հոդվածով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 14-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն և որոշման 2-րդ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Աշխատակազմի քարտուղար Կ. Իվանյանը զեկուցեց, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակի օրինակելի ձև է հաստատել: Քաղաքական և հայեցողական պաշտոնները մեկ տողով էինք գրել, ընդամենը առանձնացրել ենք:
Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 070-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ԻՎԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի սեպտեմբերի 13-ին, ժամը 16:00-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 071-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-Ի ԹԻՎ 16-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով ու 34-րդ հոդվածով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 17-ի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 16-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) որոշման թիվ 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի,
   2) որոշման թիվ 5-րդ հավելվածի գործողությունը դադարեցնել:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ն. Հովհաննիսյանը զեկուցեց, որ որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ «Սառնակունքի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» և «Սիսիանի համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումական հաստատություն» ՀՈԱԿ-ներն արդեն իսկ միավորվել են, արդյունքում փոփոխվել է նաև հաստիքացուցակը: Առաջնորդվելով օրինակելի հաստիքացուցակով՝ նախատեսված են այն հաստիքները, որոնք խիստ անհրաժեշտ են ու պարտադիր ՆՈՒՀ-ի գործառույթն իրականացնելու համար: Որոշման նպատակն է ՆՈՒՀ-ի կրթական որակի բարձրացումը, ճիշտ կառավարումն ու օգտակար ծառայության իրականացումը: Հավելեց, որ կառավարության կարգի մեջ կա փոփոխություն և օրինակելի հաստիքացուցակը հաստավելուց հետո կառաջնորդվեն այդ փոփոխություններով:

Ա. Աղաջանյանը հարցրեց, թե որևէ հաստիք կրճատվո՞ւմ է:

Ն. Հովհաննիսյանը պատասխանեց, որ որևիցե աշխատակից չի կրճատվում, պարզապես հաստիքի փոփոխություն է տեղի ունենում:

Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 072-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի ԹԻՎ 08-Լ ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ԻՎԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 61-րդ հոդվածի 1-ին մասով,«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 37-րդ հոդվածով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 21-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու մասին» թիվ 08-Լ որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Աշխատակազմի քարտուղար Կ. Իվանյանը զեկուցեց, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը ավագանու կանոնակարգի օրինակելի ձև է ուղղարկել և առաջնորդվել ենք այդ կանոնակարգով:

Հ. Դանիելյանը հարցրեց, թե ի՞նչ հիմնական փոփոխություններ կան նախկինի հետ համեմատած:

Կ. Իվանյանը պատասխանեց, որ ծավալը գրեթե չորս անգամ մեծացել է: Փոփոխությունը՝ ավագանու հանձնաժողովների ստեղծման և գործունեության կարգի, ավագանու խմբակցությունների գործունեության կարգի, նիստերի և նստաշրջանների անցկացման կարգի, հիմնականում ավագանու անդամների նիստերի մասնակցելու ու չմասնակցելու և ավագանու ներկա գտնվող անձանց հետ կապված հարցերի վերաբերյալ է: Օրինակ՝ նակինում չի եղել, այժմ ավելացել է, որ ավագանիները պարտավոր են մասնակցել նիստերին: Օրենքը պարտավորեցնող կողմ ունի, եթե նիստի ժամանակ կեսից գնում են, դա ճիշտ չէ:

Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 073-Լ/

Ավագանու անդամներ

ԱՇՈՏ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՐԱՉՅԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՆԱԽՇՈՒՆ ՅԱՋՈՒԼՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Կարեն Իվանյանը _____